# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
# ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0019 ՀՀ, Երևան, Մ. Բաղրամյան 19, +374 11 51 13 42, sergey.bagratyan@parliament.am

№ 1 «02» փետրվարի 2021թ.

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահ
ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն Միրզոյան,

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասով, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասով և 67-րդ հոդվածով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ է ներկայացվում «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են՝

1. օրենքի նախագիծը (զեկուցող՝ Սերգեյ Բագրատյան)
2. օրենքի նախագծի ընդունման հիմնավորումը
3. տեղեկանքը փոփոխվող հոդվածի վերաբերյալ:

Խնդրում եմ օրենքի ներկայացված նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Առդիր՝ 5 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՍԵՐԳԵՅ ԲԱԳՐԱՏՅԱՆ

*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասում ավելացնել նոր՝ 4-րդ կետ.

« 1) որոշմամբ առաջարկ ներկայացնել Ազգային ժողովի խմբակցություններին՝ հանձնաժողով հրավիրված Կառավարության առանձին անդամի չներկայանալու և բացատրություններ չտալու դեպքում գրավոր հարցապնդմամբ դիմել Կառավարությանը, անհրաժեշտության դեպքում ընդունել Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը վարչապետի քննարկմանն առաջարկելու մասին Ազգային ժողովի որոշում:»:

*Հոդված 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

# «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. <u>Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը</u>

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասում նշված են քննիչ հանձնաժողովի լիազորությունները: Մասնավորապես, 3-րդ կետում նշված է, որ քննիչ հանձնաժողովը կարող է.

«որոշմամբ հանձնաժողով հրավիրել իրավասու պաշտոնատար անձանց, ինչպես նաև այն անձանց, որոնք ներկայացրել են հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող տեղեկություններ:»:

Մինչդեռ, որևէ կետով առանձնացված չէ, թե նշված անձանց նիստի բացակայությունը ինչ իրավական հետևանք է առաջացնում:

Սույն նախագծի միջոցով նախ քննիչ հանձնաժողովի լիազորությունները ավելանում է ևս մեկ կետով, իսկ երկրորդ՝ Կառավարության առանձին անդամի կողմից քննիչ հանձնաժողովի նիստերի չներկայանալու դեպքում որոշակի իրավական հետևանք է առաջանում, որով կարգավորվում են հետևյալ հարցերը՝

1. Կառավարության առանձին անդամի կողմից աշխատանքների պատշաճ կատարում,
2. քննիչ հանձնաժողովի աշխատանքների արդյունավետության բարձրացում:

Այսպիսով, սույն օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է քննիչ հանձնաժողովի գործունեության արդյունքն ապահովելու անհրաժեշտությամբ:

Վերջինիս նպատակահարմարությունն առաջացավ նաև այն ժամանակ, երբ կատարվեց «Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում ներդրումային ծրագրերի շրջանակներում գործադիր իշխանության մարմիններին ներկայացված և նրանց կողմից ընդունված ֆինանսական և այլ հաշվետվությունների օրինականությունը, հիմնավորվածությունը և արժանահավատությունը ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի» կողմից կատարված աշխատանքների ամփոփում: Այդ հանձնաժողովի աշխատանքների կատարման արդյունքում որոշ պաշտոնատար անձանց նիստերին չներկայանալը և բացատրություններ չտալը գործնականում առաջացրեց մի շարք խնդիրներ: Այսպես, հանձնաժողովը

հնարավարություն չունեցավ լսել և ստանալ այն տեղեկատվությունը կամ գրավոր տարբերակով ստացված տեղեկատվության մանրամասները, ինչը կարող էր հանդիսանար մի շարք խնդիրների լուծման պատասխաններ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ազգային Ժողովում ստեղծվել և ստեղծվելու են նոր քննիչ հանձնաժողովներ, ուստի անհրաժեշտ է նախագծի ընդունման անհրաժեշտությունը: Այլապես համոզված եմ, որ մյուս քննիչ հանձնաժողովները ևս կբախվեն նման խնդիրների և քննիչ հանձնաժողովի դերակատարությունը կդառնա ձևական:

Այս նախագիծը զսպող մեխանիզմ է ստեղծում այն անձանց համար, ովքեր ստանձնել են որոշակի պաշտոններ և իրենց պարտականությունները չեն կատարում պատշաճորեն: Բնականաբար, եթե դրվի ընդհուպ մինչև պաշտոնավարման հարց, իրավասու պաշտոնատար անձը կխուսափի ոչ պատշաճ գործողությունների կատարումից:

## 2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծով առաջարկվում է կատարել լրացում, որով ավելանում է քննիչ հանձնաժողովի լիազորությունները և հնարավորություն է ստեղծվում կիրառել «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 1-ին մասի և 11-րդ մասի 1-ին կետի կանոնները:

## 3. Ակնկալվող արդյունքը

Սույն օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվող հոդվածի լրացման արդյունքում ապահովվում է Կառավարության առանձին անդամի կողմից քննիչ հանձնաժողովի նիստերի մասնակցության հարցը, որը նպաստում է գործող և ստեղծվելիք քննիչ հանձնաժողովների աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, համապատասխան պաշտոնատար անձանց կողմից աշխատանքների պատշաճ կատարմանը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 21. Քննիչ հանձնաժողովի գործունեությունը

1. Քննիչ հանձնաժողովը կարող է իր՝

1) անդամների առնվազն մեկ քառորդի նախաձեռնությամբ՝ առանց որոշման, գրավոր դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու պաշտոնատար անձանց՝ պահանջելով իր իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ.

2) որոշմամբ դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու պաշտոնատար անձանց՝ հանձնաժողովում քննարկվող հարցի փաստական հանգամանքների ուսումնասիրման համար՝ պատվիրելով փորձաքննություններ, և ստանալ դրանց արդյունքում կազմված եզրակացությունները.

3) որոշմամբ հանձնաժողով հրավիրել իրավասու պաշտոնատար անձանց, ինչպես նաև այն անձանց, որոնք ներկայացրել են հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող տեղեկություններ,

4) ) որոշմամբ առաջարկ ներկայացնել Ազգային ժողովի խմբակցություններին՝ հանձնաժողով հրավիրված Կառավարության առանձին անդամի չներկայանալու և բացատրություններ չտալու դեպքում գրավոր հարցապնդմամբ դիմել Կառավարությանը, անրաժեշտության դեպքում ընդունել Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը վարչապետի քննարկմանն առաջարկելու մասին Ազգային ժողովի որոշում:

2. Քննիչ հանձնաժողովի պահանջած տեղեկությունները և եզրակացությունները պետք է նրան ուղարկվեն գրավոր դիմումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, եթե դիմումի մեջ ավելի երկար ժամկետ նշված չէ, կամ դիմումի հասցեատերը հանձնաժողովի պահանջը կատարելու համար ողջամիտ ժամկետ չի առաջարկում: Պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները հանձնաժողովի գրավոր դիմումով նրան են տրամադրվում օրենքով սահմանված կարգով: Հանձնաժողովի անդամները դիմումով պահանջվող տեղեկություններին առնչվող նյութերին կամ փաստաթղթերին կարող են ծանոթանալ նաև դրանց գտնվելու վայրում:

3. Քննիչ հանձնաժողովի նիստերն անցկացվում են մշտական հանձնաժողովների համար Կանոնակարգի 15-րդ հոդվածով սահմանված կարգին համապատասխան: Հանձնաժողովի հերթական նիստերը գումարվում են հանձնաժողովի կամ նրա նախագահի սահմանած օրերին: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է (գրանցվել է) հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին, և նիստը նախագահում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության կամ պաշտոնը թափուր լինելու դեպքում՝ նրա տեղակալը կամ հանձնաժողովի կողմից որոշված անդամը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

4. Քննիչ հանձնաժողովն ունի իր աշխատակարգը, որը, Խորհրդի սահմանած օրինակելի աշխատակարգին համապատասխան, հաստատվում է հանձնաժողովի որոշմամբ: